# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

ՄԻՔԱՅԵԼ ԴՐԼԳԱՐՅԱՆ

Մինչև վերջերս ՍՍՀՄ բանվոր դասակարգի կազմում տեղի ունեցած որակական փոփոխությունների ուսումնասիրության հարցերով զբաղվող հետազոտողների զգալի մասն առաջին հերթին ուշադրությունը կենտրոնացնում էր նրա կուլտուր-տեխնիկական մակարդակի աճը լուսաբանելու վրա։ Սակայն վերջին տարիներին ավելի շատ ուշադրություն է դարձվում բանվոր դասակարգի կազմում որակական շարժը բնութագրող սեռատարիքային փոփոխությունների, ազգային կազմի և այլ ցուցանիշների վրա։ Փորձենք ընդհանուր գծերով լուսաբանել այն որակական փոփոխությունները (կուլտուր-տեխնիկական մակարդակի, սեռատարիքային և ազգային կազմի), որ կրել է Հայաստանի բանվոր դասակարգը զարգացած սոցիալիզմի պայմաններում։

Բանվոր դասակարգի որակական փոփոխությունների առավել կարևոր ցուցանիշներից է նրա կուլտուր-տեխնիկական մակարդակի աճը։ Մեր հասարակության առաջընթացի արդի փուլում տնտեսության զարգացումը նոր պահանջներ է ներկայացնում բանվորական կադրերի նկատմամբ, որը կապված է ժողովրդական տնտեսության առավել կարևոր ճյուղերի զարգացման, արտադրության պրոցեսների մեքենայացման և ավտոմատացման, ֆիզիկական ծանր աշխատանքով զբաղված բանվորների թվաքանակի նվազման հետ։ Այսպես, օրինակ, եթե 1959 թ. հանրապետության արդյունաբերության մեջ կային ընդամենը 149 ապարատավարներ, ապա 1975 թ. նրանց թիվը հասավ 4559-ի կամ ավելացավ ավելի քան 30 անգամ[1]։ Մեքենաների ու մեխանիզմների ավելի լայն կիրառումը, արտադրական պրոցեսների ավտոմատացումը և մեքենայացումը զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում զգալիորեն փոխեցին բանվորների աշխատանքի բնույթը։ Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում միայն 9-րդ հնգամյակի տարիներին նոր տեխնիկայի գծով կատարվեցին ավելի քան 1400 կարևորագույն ներդրումներ, այդ թվում 405-ը՝ արդյունաբերական արտադրանքի նոր տեսակների յուրացման, 410-ը՝ առաջավոր տեխնոլոգիայի ներդրման, 240-ը՝ արտադրական պրոցեսների մեքենայացման և 120-ը՝ ավտոմատացման ուղղությամբ և այլն[2]։ Արդյունաբերության մեջ 1975 թ. մեքենաներով և մեխանիզմներով աշխատող բանվորների տեսակարար կշիռը կազմեց 43%։

Շինարարության մեջ արտադրական պրոցեսների մեքենայացումը և ավտոմատացումը ավելի բարձր տեմպերով է տեղի ունեցել։ Հատկապես այն

---

[1] «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», Ереван, 1967, էջ 250, «Труд в Армянской ССР», Ереван, 1976, էջ 128։

[2] Ա. Մ. Կիրակոսյան, Ինդուստրիալ Հայաստան, Երևան, 1977, էջ 35։

[3] «Труд в Армянской ССР», Ереван, 1976, էջ 10։

բնագավառներում, որտեղ առաջներում ավելի շատ էր կիրառվում ձեռքի աշխատանքը։ Ավելացել է նաև այդ բնագավառում աշխատողների թվաքանակը։ Այսպես, օրինակ, 1959 թ. համեմատությամբ 1975 թ. բետոնագործների թիվն ավելացել է մոտ 3,5, իսկ ճանապարհաշինարարներինը՝ 8,3 անգամ[4]։ Համապատասխանաբար աճել է նաև մեքենաներ սպասարկող բանվորների թվաքանակը։ Այսպես, եթե 1960 թ. հանրապետության շինհրապարակներում օգտագործվում էր 285 էքսկավատոր, 218 բուլդոզեր, 222 վերամբարձ կռունկ, ապա 1977 թ.՝ համապատասխանաբար 1265, 1193 և 848[5], որը հանգեցրել է դրանք սպասարկողների թվաքանակի աճին։

Զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում մեծ փոփոխություններ են կատարվել նաև տրանսպորտում աշխատող բանվորների մասնագիտական կազմի կառուցվածքում։ Այստեղ, ինչպես արդյունաբերության և շինարարության մեջ, վճռորոշ նշանակություն ունեցավ տեխնիկական առաջընթացը։ 1952 թ. հանրապետությունում սկսվեց երկաթգծերի էլեկտրիֆիկացումը և արդեն 1976 թ. էլեկտրիֆիկացված էր անդրկովկասյան երկաթգծի երևանյան բաժանմունքի ավելի քան 87%-ը[6] (այժմ էլեկտրիֆիկացումն ավարտվել է)։ Դրա հետևանքով այնպիսի մասնագիտություններ, ինչպիսիք են շոգեքարշի մեքենավարները և հնոցապանները՝ վերացան, և արագորեն տարածվեց էլեկտրաքարշի մեքենավարի ժամանակակից մասնագիտությունը։

Բնական է, որ տեխնիկական առաջադիմությունը պետք է անդրադառնար բանվորական կադրերի կրթական մակարդակի բարձրացման վրա։ Այսպես, եթե 1959 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով մեր հանրապետությունում յուրաքանչյուր 1000 բանվորից բարձրագույն, միջնակարգ և թերի միջնակարգ կրթություն ուներ 487-ը, ապա 1970 թ.՝ արդեն 617-ը[7]։ Բանվորների հանրակրթական մակարդակն էլ ավելի բարձր տեմպերով էր աճում հետագա տարիներին։ Այսպես, օրինակ, 1973 թ. արդյունաբերության մեջ աշխատող բանվորների 41,8%-ը ուներ բարձրագույն, թերի բարձրագույն, միջնակարգ մասնագիտական կամ միջնակարգ (լրիվ և թերի) կրթություն[8]։ Ըստ արդյունաբերության ճյուղերի պատկերը հետևյալն էր. մեքենաշինություն՝ 50,2, քիմիական և նավթաքիմիական արդյունաբերություն՝ 40,5, թեթև արդյունաբերություն՝ 37,5, շինարարություն՝ 25, ավտոտրանսպորտ՝ 41,9%[9]։ Ե. Բեյլինայի հաշվարկների համաձայն, բանվորների կրթական մակարդակով Հայաստանը 1959 թ. միութենական հանրապետությունների մեջ գրավում էր 2-րդ, իսկ 1970 թ՝ 3-րդ տեղը, որ վկայում է հանրապետության բանվոր դասակարգի կրթական բարձր մակարդակի մասին[10]։

Բանվոր դասակարգի կազմի որակական փոփոխություններից առավել կարևորները բանվորների մասնագիտական որակավորման բարձրացումը

---

[4] «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», էջ 252, «Труд в Армянской ССР», Ереван, 1976, էջ 130։

[5] «Народное хозяйство Армянской ССР в 1977 г.», Ереван, 1978, էջ 145։

[6] Г. А. Пахлеванян, Советская Армения к 60-летию Великого Октября, Ереван, 1977, էջ 42։

[7] «Итоги переписи населения 1970 года», М., 1972, т. V, էջ 143։

[8] «Народное хозяйство Армянской ССР в 1974 г.», Ереван, 1975, էջ 156։

[9] «Коммунист», 20. VIII. 1977.

[10] Е. Э. Бейлина, Рост рабочего класса СССР в условиях развитого социализма («Исторические записки», М., 1977, էջ 42)։

և հարակից մասնագիտությունների ձեռքբերումն են։ Վ. Ի. Լենինը նշել է, որ «չի կարելի պատկերացնել ապագա հասարակության իդեալը առանց ուսուցումը միացնելու երիտասարդ սերնդի արտադրողական աշխատանքի։ Ոչ ուսուցումն ու կրթությունն առանց արտադրողական աշխատանքի, ոչ արտադրողական աշխատանքն առանց զուգահեռ ուսուցման ու կրթության չեն կարող դրվել այն բարձրության վրա, որ պահանջում են տեխնիկայի արդի մակարդակը և գիտական իմացության վիճակը»[11]։ Ուսուցման և արտադրողական աշխատանքի փոխներգործության մասին Վ. Ի. Լենինի նշած օրինաչափությունը ներկա փուլում ստանում է հույժ կարևոր նշանակություն՝ ելնելով տեխնիկայի զարգացման ժամանակակից մակարդակի պահանջներից։

Արտադրության մեջ բանվորական կադրերի պատրաստումն ու որակավորման բարձրացումն իրականացվում են հիմնականում անհատական, բրիգադային և դասընթացային ուսուցման մեթոդներով։ Բացի թվարկված մեթոդներից, ձեռնարկություններում բանվորների որակավորման բարձրացումը կատարվում է արտադրության առաջավորների դպրոցների, նպատակային ու երկրորդ մասնագիտության ձեռքբերման արտադրական-տեխնիկական դասընթացների կազմակերպման և այլ միջոցներով։ Այսպես, Վ. Ի. Լենինի անվան Էլեկտրամեքենաշինական գործարանում թվարկված եղանակներով 1961—1966 թթ. որակավորումը բարձրացել է 3551 մարդ, 1966—1970 թթ.՝ 5884 և 1971—1975 թթ.՝ 10385 մարդ[12]։

Բանվոր դասակարգի կազմի որակական փոփոխությունները բացահայտելու համար մեծ նշանակություն ունի բանվորների և ծառայողների տարիքային կազմի շարժի ուսումնասիրությունը (աղյուսակ 1)։

Աղյուսակ 1

ՀՍՍՀ արդյունաբերության, շինարարության մեջ և տրանսպորտում զբաղված բանվորների ու ծառայողների տարիքային կառուցվածքը (տոկոսներով)[13]։

| Տարեթիվը | Զբաղվածների տեսակարար կշիռն ըստ տարիքային խմբի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | մինչև 25 | 25—34 | 35—44 | 45—49 | 50—54 | 55—59 | 60 և ավելի |
| արդյունաբերություն | | | | | | | |
| 1963 թ. | 28,6 | 37,9 | 19,3 | 5,3 | 4,5 | 2,6 | 1,8 |
| 1973 թ. | 25,0 | 27,2 | 28,9 | 9,7 | 4,0 | 2,5 | 2,7 |
| շինարարություն | | | | | | | |
| 1963 թ. | 26,1 | 40,1 | 18,3 | 4,9 | 4,8 | 3,5 | 2,3 |
| 1973 թ. | 17,8 | 27,1 | 32,1 | 10,9 | 4,9 | 3,6 | 3,6 |
| տրանսպորտ | | | | | | | |
| 1963 թ. | 15,1 | 40,5 | 24,6 | 7,2 | 6,5 | 3,8 | 2,3 |
| 1973 թ. | 13,7 | 24,7 | 34,5 | 13,1 | 5,5 | 4,2 | 4,3 |

11 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 2, էջ 606։

12 Տվյալները վերցված են Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի ընթացիկ արխիվից։

13 Վ. Ա. Կյուրեղյան, Հայկական ՍՍՀ աշխատանքային ռեսուրսների օգտագործումը արդի փուլում, Երևան, 1978, էջ 82։

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ արդյունաբերության մեջ մինչև 25 տարեկան բանվորների և ծառայողների տեսակարար կշիռը 1963 թ. կազմել է 28,6, իսկ 1973 թ.՝ 25%, շինարարության մեջ՝ համապատասխանաբար 26,1 և 17,8, տրանսպորտում՝ 15,1 և 13,7%։ Նույն ժամանակամիջոցում 25—34 տարիքային խմբի բանվորների և ծառայողների տեսակարար կշիռն արդյունաբերության մեջ 37,9-ից իջել է 27,2%-ի։ Նույն երևույթը նկատվում է նաև շինարարությունում և տրանսպորտում։ Դա բացատրվում է նրանով, որ ինչպես մինչև 25 այնպես էլ 25—34 տարիքային խմբի ներկայացուցիչները հիմնականում ծնվել են Հայրենական մեծ պատերազմի տարիներին կամ էլ անմիջապես դրանից հետո, երբ, հասկանալի պատճառներով, խիստ նվազել էր բնակչության աճը։ Որպեսզի պարզ լինի, թե որքանով է պատերազմն ազդել մինչև 34 տարիքային խմբերի տեսակարար կշռի վրա, նշենք, որ արդյունաբերության մեջ նշված տարիքային խմբերի տեսակարար կշիռը 1963—1973 թթ. 66,5-ից կրճատվել է մինչև 52,2%-ի, շինարարության մեջ՝ 66,2-ից 44,9%-ի, իսկ տրանսպորտում՝ 55,6-ից 38,4%-ի։ Աղյուսակի վերլուծությունը նաև ցույց է տալիս, որ 1963—1973 թթ. ինչպես արդյունաբերության, այնպես էլ շինարարության մեջ և տրանսպորտում դիտվել է 35—59 տարիքային խմբերին պատկանող բանվորների և ծառայողների տեսակարար կշռի աստիճանական բարձրացում։ Այդ թվականներին 60 տարեկան և դրանից բարձր տարիքային խմբի ներկայացուցիչների ավելացման նկատելի տենդենցը հատուկ է բոլոր զարգացած ինդուստրիալ երկրներին և բացատրվում է բնակչության հարաբերական ծերացմամբ։ Սակայն, ինչպես վկայում են Վ. Խոչաբեկյանի հետազոտությունները, 1970-ական թվականների սկզբներից սկսած մեր հանրապետությունում նկատելի է աշխատունակ բնակչության երիտասարդացման տենդենց, որը հանգեցրել է ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվոր ծառայողների մինչև 40 տարիքային խմբերի ներկայացուցիչների տեսակարար կշռի աճին[14]։

Ինչպես ցույց են տալիս գիտության տարբեր բնագավառներում (բժշկություն, հոգեբանություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն) կատարվող ուսումնասիրությունների արդյունքները, բանվորների տարիքային կազմի և նրանց աշխատանքի արտադրողականության միջև գոյություն ունի սերտ կապ։ Բանվորների աշխատանքի արտադրողականությունն իր գագաթնակետին է հասնում միջին հաշվով մինչև 40 տարեկան հասակը։ Դրան հետևում է անկումը, որը դրսևորվում է հատկապես 50 տարեկանից[15]։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև մեր հանրապետության բանվոր դասակարգի սեռային կազմի փոփոխությունների ուսումնասիրությունը։ Արտադրության մեջ գիտատեխնիկական հեղափոխության նվաճումների ներդրումը և աշխատանքային պայմանների բարելավումն էապես նպաստեցին հասարակական արտադրության մեջ կնոջ դերի բարձրացմանը։ Վ. Ի. Լենինը նշել է, որ «կնոջ լիակատար ազատագրության և նրան տղամարդուն իսկապես հավասար դարձնելու համար հարկավոր է, որ հասարակական տնտեսություն լինի, և կինը մասնակցի ընդհանուր արտադրողական

---

[14] «Население союзных республик», М., 1977, էջ 273։

[15] В. Переведенцев, Демография: ситуация, тенденции, политика («Знание—сила», 1978, № 1, էջ 27).

աշխատանքին։ Այն ժամանակ կիներ կգրավի նույնպիսի դրություն, ինչպես տղամարդը»[16]։

Սովետական իշխանության առաջին իսկ օրերից Հայաստանում կին բանվորների և ծառայողների թվաքանակը սկսեց աննախընթաց աճել։ Եթե 1928 թ. Հանրապետության ժողովրդական տնտեսությունում զբաղված ծառայողների մեջ կանանց տեսակարար կշիռը կտրվում էր 15, արդյունաբերության մեջ՝ 13, շինարարության մեջ՝ 1, տրանսպորտում՝ 4%, ապա 1959 թ. այն ժողտնտեսության մեջ կազմեց 37, արդյունաբերության մեջ՝ 38, շինարարության մեջ՝ 11, և տրանսպորտում՝ 14%[17]։

Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ զարգացած սոցիալիզմի պայմաններում դիտվել է կին բանվորների և ծառայողների թվաքանակի էլ ավելի աճ, ինչպես նաև նրանց տեսակարար կշռի բարձրացում (աղյուսակ 2)։

Աղյուսակ 2

ՀՍՍՀ ժողտնտեսության մեջ և նրա որոշ ճյուղերում (արդյունաբերություն, շինարարություն և տրանսպորտ) զբաղված կին բանվորների ու ծառայողների թվաքանակը (հազար մարդ) և տեսակարար կշիռը (տոկոսներով) 1960—1975 թթ.[18]

| Տարիներ | Ժողտնտեսության մեջ | | Արդյունաբերության մեջ | | Շինարարության մեջ | | Տրանսպորտում | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թիվը | տեսակարար կշիռը | Թիվը | տեսակարար կշիռը | Թիվը | տեսակարար կշիռը | Թիվը | տեսակարար կշիռը |
| 1960 | 161 | 38 | 57 | 38 | 4 | 11 | 4,1 | 12 |
| 1965 | 248 | 39 | 81 | 40 | 7 | 10 | 5,0 | 11 |
| 1970 | 346 | 41 | 119 | 41 | 9 | 11 | 5,9 | 11 |
| 1975 | 445 | 45 | 149 | 47 | 8 | 10 | 7,2 | 11 |

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ժողովրդական տնտեսության մեջ կին բանվորների ու ծառայողների թիվը 1960—1975 թթ. ավելացել է 176,4%-ով։ Ընդ որում, արդյունաբերության մեջ՝ 161,4, շինարարության մեջ՝ 100, իսկ տրանսպորտում՝ 75,6%-ով։ Փոխվել է նաև կին բանվորների և ծառայողների տեսակարար կշիռը բանվորների և ծառայողների ընդհանուր թվաքանակում, ժողովրդական տնտեսության մեջ 38-ից հասել է 45%-ի, արդյունաբերության մեջ՝ 38-ից 47%-ի, իսկ շինարարության մեջ նվազել է 11-ից հասնելով 10%-ի։ Տրանսպորտում ևս այդ ցուցանիշը նվազել է՝ 12-ից հասնելով 11%-ի։ Անհրաժեշտ է նշել, որ ժողովրդական տնտեսության ոչ

16 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 30, էջ 33։

17 «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», էջ 249։

18 Աղյուսակը կազմված է մեր կողմից՝ հետևյալ վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա. «Экономика и культура Армении к 50-летию Великого Октября», էջ 249, «Народное хозяйство Армянской ССР в 1974 г.», էջ 28, «Труд в Армянской ССР», Ереван, 1970, էջ 38, 39, 40, «Труд в Армянской ССР», Ереван, 1976, էջ 67, 68, 69, «Народное хозяйство Армянской ССР в 1977 г.», էջ 30։

բոլոր բնագավառներում է կանանց տեսակարար կշռի բարձրացումը համարվում գրական երևույթ. բանվորուհիների տեսակարար կշռի բարձրացումը ժողովրդական տնտեսության այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են լեռնարիմիական արդյունաբերությունը, սև մետալուրգիան, շինարարությունը և այլն, որտեղ դեռևս գերակշռում է ձեռքի ծանր աշխատանքը, անհրաժեշտ է դիտել որպես բացառական երևույթ։

Սովետական բանվոր դասակարգը բազմազգ է և այդ կապակցությամբ կարևոր նշանակություն ունի նրա կազմի ուսումնասիրությունը ազգային կազմերի տեսանկյունից։ Հայերի տեսակարար կշիռը Հայաստանի բնակչության կազմում 1970 թ. եղել է 88,6%[19]։ Անհրաժեշտ է նշել, որ ազգային հանրապետություններում բանվոր դասակարգի կազմում տվյալ ազգին պատկանող բանվորների կշռով մեր հանրապետությունը ներկայումս Միությունում գրավում է առաջին տեղը։ Բանվոր դասակարգի կազմի մեջ ազգային կազմերի տեսակարար կշռի ցուցանիշներով Հայաստանը միութենական հանրապետությունների մեջ առաջինն է եղել նաև 1939 թ. (77,3%) և 1959 թ. (88,2%)[20]։ Հայաստանի բանվոր դասակարգի կազմում հայերի այդպիսի բարձր տեսակարար կշիռը բացատրվում է նրանով, որ հանրապետության բնակչությունը ազգային տեսակետից խիստ միատարր է։

Անհրաժեշտ է նշել, որ զարգացած սոցիալիզմի ժամանակաշրջանում և առանձնապես վերջին տարիներին Հայաստանի բանվոր դասակարգի ազգային կազմում տեղի են ունեցել որոշ փոփոխություններ՝ կապված բանվորական միջհանրապետական կազմերի տեղաշարժերի հետ։ Այդ փոփոխություններն իրենց հերթին նպաստել են տարբեր հանրապետությունների միջև եղած փոխադարձ կապերի ամրապնդմանը։

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր հանրապետությունում զարգացած սոցիալիզմի պայմաններում բանվոր դասակարգի կազմում տեղի են ունենում շոշափելի որակական փոփոխություններ, որոնք հիմնականում պայմանավորված են. ա) ֆիզիկական ծանր աշխատանքի կրճատումով, ինչպես նաև որոշ հին մասնագիտությունների վերացումով, բ) արտադրության մեջ ավելի բարդ մեքենաների ու մեխանիզմների կիրառումով և նոր մասնագիտությունների առաջացումով։

Տեխնիկական առաջադիմության պահանջներից ելնելով, ուսումնասիրվող ժամանակահատվածում կատարվում է բանվորների կրթական մակարդակի զգալի բարձրացում։ Նկատելի փոփոխություններ են տեղի ունենում բանվորների տարիքային կառուցվածքում։ Բանվորների սեռային կազմում փոփոխություններն ընթանում են կնոջ աշխատանքի ավելի լայն ներգրավումով։ Դիտվում է ազգային բանվորական կազմերի տեսակարար կշռի բարձրացում, ինչպես նաև միութենական հանրապետությունների միջև բանվորական կազմերի փոխանակության ավելացում։

---

[19] «Армения в цифрах в 1971 г.», Ереван, 1972, էջ 14։

[20] С. Л. Сенявский, Рост рабочего класса СССР (1951—1965 гг.), М., 1966, էջ 223։

# КАЧЕСТВЕННЫЕ ИЗМЕНЕНИЯ В СОСТАВЕ РАБОЧЕГО КЛАССА АРМЕНИИ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

МИКАЕЛ ГРИГОРЯН

**Резюме**

В период зрелого социализма в составе рабочего класса Армении произошли коренные качественные изменения, которые выразились в первую очередь в ощутимом росте культурно-технического уровня рабочего класса республики. В частности, изменилась профессиональная структура рабочих кадров, повысился их общеобразовательный уровень.

Значительные изменения произошли в рассматриваемый период в возрастном и половом составе рабочих республики. В частности, увеличился удельный вес женщин-рабочих как в народном хозяйстве в целом, так и в его отраслях.

На современном этапе в составе рабочего класса наблюдается увеличение удельного веса рабочих представителей коренного населения республики, кроме того, усиливается обмен рабочими кадрами союзных республик.